ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, hamaynqtegh@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025ԹՎԱԿԱՆԻ N 187-Ա

ԱՆԴՐԱՆԻԿ ՇԵԳՈՒՆՑԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՄԱՌԱՆԸ ԵՎ ԾԱԾԿԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլխի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածը, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի 9)-րդ ենթակետով սահմանված աղյուսակի 16-րդ տողի գործակիցը, հաշվի առնելով Անդրանիկ Հայկի Շեգունցի 2025 թվականի հուլիսի 22–ի՝ իր կողմից կառուցված ինքնակամ շինությունների օրինականացման վերաբերյալ դիմումը, ***որոշում եմ՝***

1.Անդրանիկ Շեգունցին սեփականության իրավունքով պատկանող 0,0977 հա մակերեսով հողամասում (հասցեն՝ Տեղ համայնք գյուղ Տեղ, 42-րդ փողոց, թիվ 4) ինքնակամ կառուցված՝ 194,7 քառակուսի մետր արտաքին չափերով բնակելի տունը,

30,1 քառակուսի մետր արտաքին չափերով մառանը և 87,6 քառակուսի մետր արտաքին չափերով ծածկը (կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2024LNRMRU), որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջող իրավունք, ճանաչել օրինական և թույլատրել գրանցելու որպես Անդրանիկ Շեգունցի սեփականություն:

2.Պարտավորեցնել Անդրանիկ Շեգունցին ինքնակամ շինությունների օրինականացման համար տեղական բյուջեի 900285121209 հաշվեհամարին վճարել 242 414 (երկու հարյուր քառասուներկու հազար չորս հարյուր տասնչորս) ՀՀ դրամ՝ (194,7x10000,0x0,0874=170168; 30,1x10000,0x0,0874=26308; 87,6x6000,0x0,0874= 45938): Որոշման ուժի մեջ մտնելու օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

4.Աշխատակազմի քարտուղարի պարտականություններ կատարողին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրազեկումից հետո հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒԼՈՒՆՑ**

2025թ. հոկտեմբերի 20
գ.Տեղ